ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

19.12.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/71

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 30.11.2017թ. թիվ 03/26-3/22090-17 գրությամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.11.2017թ. թիվ ԴՎԱ/4302 գրության հիման վրա, 30.11.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է Ֆ/Ա Իշխան Միրզոյանին (այսուհետ՝ նաև Ֆ/Ա) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.11.2017թ. թիվ ԴՎԱ/4302 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ ՊՆ-ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել Ֆ/Ա Իշխան Միրզոյանը: 2017թ. նոյեմբերի 7-ին Ֆ/Ա Իշխան Միրզոյանի էլեկտրոնային փոստին ծանուցում է ուղարկվել ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը ներկայացնելու համար, սակայն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Սարգիս Պետրոսյանը:

3. <u>Ֆ/Ա Իշխան Միրզոյանի ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ֆ/Ա Իշխան Միրզոյանը 13.12.2017թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով թիվ ՍՑ-ԷՍ-2017/71 պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար հիմք է հանդիսացել ՀՀ պաշտպանության նախարարության ՀՀ ֆինանսների նախարարությանը 28.11.2017թ. ուղղված թիվ ԴՎԱ/4302 գրությունը, որով ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ ՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել ֆիզիկական

անձ Իշխան Միրզոյանը: 2017թ. նոյեմբերի 7-ին ֆիզիկական անձ Իշխան Միրզոյանի էլեկտրոնային փոստին ծանուցում է ուղարկվել ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը ներկայացնելու համար, սակայն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել:

Վերոհիշյալի կապակցությամբ հայտնում ենք հետևյալ նկատառումները.

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից (այսուհետ նաև՝ պատվիրատու) կազմակերպվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգ:

Նշված ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև Ֆ/Ա Իշխան Միրզոյանը:

Ընթացակարգի տեքստը հաստատվել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ գնահատող հանձնաժողով) 2017թ. օգոստոսի 1-ի թիվ 1 որոշմամբ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2017թ. օգոստոսի 9-ը:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, 1-ին չափաբաժնով մատակարարումը նախատեսվել է սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. նոյեմբերի 3-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով արձանագրվել է հետևյալը. «Հաշվի առնելով գնահատման տարբեր փուլերում մասնակիցների որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու համար տրամադրված ժամկետները, ինչպես նաև այն, որ մասնակցի հայտը գնահատելու համար գրություն է գրվել լիազոր մարմին՝ պարզաբանում ստանալու համար, փաստացի հնարավոր չեղավ պայմանագիրը կնքելու հրավերով նախատեսված գնման ժամանակացույցին համապատասխան, այդ իսկ պատճառով պատասխանատու ստորաբաժանման կողմից ուղարկվել է նոր գնման ժամանակացույց՝ առաջարկելով սեպտեմբեր և հոկտեմբեր ամսվա քանակի մատակարարումները տեղափոխել մինչև դեկտեմբերի 1-ը: 2017թ. հոկտեմբերի 9-ին «Դեագա» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի ապահովումով ներկայանալ պայմանագիր ստորագրելու, սակայն «Դեագա» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ համաձայն չէ նոր գնման ժամանակացույցով պայմանագիր ստորագրելու:

Քանի որ անգործության ժամկետը ավարտվել է հոկտեմբերի 3-ին, պատասխանատու ստորաբաժանման կողմից ուղարկվել է գրություն, որ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով սեպտեմբեր ամսվա պահանջարկը վերացել է և առաջարկվում է սեպտեմբեր ամսվա պահանջարկի մասով պայմանագիր չկնքել: Հոկտենբերի 13-ին «Դեագա» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագրի ապահովումով ներկայանալ հոկտեմբեր ամսվա խմբաքանակի համար պայմանագիր ստորագրելու, սակայն «Դեագա» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 27-ը չի ներկայացել պայմանագիր ստորագրելու: Քանի որ «Դեագա» ՍՊԸ-ն 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով սահմանված ժամկետում չի ներկայացել պայմանագիր կնքելու, գնահատող հանձնաժողովի որոշմամբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը 1-ին չափաբաժնով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող:

Նույն արձանագրության 1.2. կետով արձանագրվել է հետևյալը. «Քանի որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը արդեն իսկ ներկայացրել էր ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշները՝ հանձնաժողովը որոշեց նրանից պահանջել ներկայացնելու միայն 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը»:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2017թ. նոյեմբերի 14-ի նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն արձանագրվել է հետևյալը. «Ֆ/Ա Իշխան Միրզոյանը սահմանված ժամկետում՝ մինչև նոյեմբերի 10-ը, չի ներկայացրել 1-ին չափաբաժնի մասով ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը, որի հիման վրա էլ գնահատող հանձնաժողովը 1-ին չափաբաժնի մասով մերժել է նրա հայտը:»:

Նույն արձանագրությամբ 1-ին չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգը հայտարարվել է չկայացած, քանի որ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստերի համադրումից ստացվում է հետևյալ իրավիճակը.

1. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2017թ. օգոստոսի 9-ին:

2. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնով, հրավերին կից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով՝ գնման

ժամանակացույցով, մատակարարումը նախատեսվել է սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում:

3. Գնահատող հանձնաժողովի 2017թ. նոյեմբերի 3-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով ընթացակարգի 1-ին չափաբաժնով հրավերին կից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ը՝ գնման ժամանակացույցը, պատվիրատուի կողմից փոփոխվել է և որոշում է կայացվել սեպտեմբեր և հոկտեմբեր ամսվա քանակի մատակարարումները տեղափոխել մինչև դեկտեմբերի 1-ը:

4. 2017թ. նոյեմբերի 3-ին գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ֆ/Ա Իշխան Միրզոյանին 1-ին չափաբաժնով ճանաչել 1-ին տեղ զբաղեցնող և վերջինիս տրվել է ժամկետ՝ մինչև նոյեմբերի 10-ը, ներկայացնել 1-ին չափաբաժնի մասով ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ պատվիրատուի կողմից խախտվել են ընթացակարգի կազմակերպման և անցկացման բոլոր ողջամիտ ժամկետները: Այն դեպքում, երբ ըստ հրավերին կից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, 1-ին չափաբաժնով մատակարարումները պետք է իրականացվեր սեպտեմբեր և հոկտեմբեր ամսվա ընթացքում, Իշխան Միրզոյանից 1-ին չափաբաժնով ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը պահանջվել է ներկայացնել միայն մինչև 2017թ. նոյեմբերի 10-ը:

Մատակարարման ժամկետների հետ կապված խնդրի վերաբերյալ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը տեղեկացրել է պատվիրատուին՝ հայտնելով, որ իր կողմից անհնար կլինի կնքել 1-ին չափաբաժնով պայմանագիր, այն դեպքում, երբ մատակարարման ամիսները արդեն անցել են, սակայն պատվիրատուի կողմից Ֆ/Ա Իշխան Միրզոյանի առարկությունը չի ընդունվել:

Գտնում ենք, որ նման պայմաններում, երբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանից 1-ին չափաբաժնով պահանջվել է ներկայացնել փաստաթղթերը մինչև 2017թ. նոյեմբերի 10-ը, այն դեպքում, երբ մատակարարման ամիսները տվյալ չափաբաժնով արդեն անցել էին, ուստի Ֆ/Ա Իշխան Միրզոյանը օբյեկտիվորեն զրկվել է տվյալ չափաբաժնով իր հետագա մասնակցությունը շարունակելու հնարավորությունից:

Բացի այդ, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը, 2017թ. նոյեմբերի 3-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով 1-ին չափաբաժնով հրավերին կից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ը՝ գնման ժամանակացույցը, փոփոխելով և սահմանելով նոր ժամանակացույց, խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Մասնավորապես, պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի և ընթացակարգի Հրավերի 9.7 կետի պահանջները, որոնք արգելում են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, որոնք կարող են հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, իսկ Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը ներառում է նաև ապրանքի ձեռքբերման և վճարման պայմանները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի կողմից քննվել է «Դեագա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնած թիվ ՍՑ-ԷՍ-2017/63 պաշտոնական ընթացակարգը, որի շրջանակում ուսումնասիրվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված նույն ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 27.11.2017թ. կայացրած թիվ ՍՑ-ԷՍ-2017/63 որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից թույլ են տրվել սույն դիրքորոշմամբ մատնանշված խախտումները և այդ հիմքում «Դեագա» ՍՊԸ-ն չի ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Վերոհիշյալ որոշման հիմքում դրվել է նաև ՀՀ ֆինանսների նախարարության դիրքորոշումը, ով նույնպես արձանագրել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ տված խախտումները:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության կողմից լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/71 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 30.11.2017թ. թիվ 03/26-3/22090-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.11.2017թ. թիվ ԴՎԱ/4302 գրությունը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ Հրավեր), ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 09.08.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3, 20.09.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 4 և 03.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրությունները, Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից Խորհրդին ներկայացված գրավոր դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը վարունգի և լոլիկի ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ֆ/Ա Իշխան Միրզոյանը:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/74 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման հրավերի գնման ժամանակացույցով, ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել 2017թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսները:

Հանձնաժողովը 09.08.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով որոշել է 1-ին տեղն զբաղեցնող մասնակից ճանաչել «Դեագա» ՍՊԸ-ին՝ 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով, իսկ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին՝ 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը 03.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած թիվ 5 նիստի արձանագրության 1.1 կետով արձանագրել է հետևյալը.

«Հաշվի առնելով գնահատման տարբեր փուլերում մասնակիցների որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու համար տրամադրված ժամկետները, ինչպես նաև այն, որ մասնակցի հայտը գնահատելու համար գրություն է գրվել

լիազոր մարմին պարզաբանում ստանալու համար, փաստացի հնարավոր չեղավ պայմանագիրը կնքել հրավերով նախատեսված գնման ժամանակացույցին համապատասխան, այդ իսկ պատճառով պատասխանատու ստորաբաժանման կողմից ուղարկվել է նոր գնման ժամանակացույց՝ առաջարկելով սեպտեմբեր և հոկտեմբեր ամսվա քանակների մատակարարումները տեղափոխել մինչև դեկտեմբերի 1-ը»:

Հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշել է ծանուցել «Դեագա» ՍՊԸ-ին պայմանագրի ապահովումով ներկայանալ պայմանագիր ստորագրելու, սակայն վերջինս սահմանված ժամկետում չի ներկայացել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Դեագա» ՍՊԸ-ն 1-ին և 4-րդ չափաբաժինների մասով զրկվել է պայմանագիրն ստորագրելու իրավունքից, Հանձնաժողովը որոշել է 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել Ֆ/Ա Իշխան Միրզոյանին:

Նույն արձանագրության 1.2 կետով Հանձնաժողովը որոշել է Ֆ/Ա Իշխան Միրզոյանից պահանջել ներկայացնելու միայն 1-ին չափաբաժնի մասով տեխնիկական բնութագիրը, քանի որ վերջինիս կողմից արդեն իսկ ներկայացված են եղել հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը:

Հանձնաժողովը՝ 14.11.2017թ. ժամը 11:00-ին կայացած թիվ 6 նիստի արձանագրության 1.1 կետով արձանագրել է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը սահմանված ժամկետում՝ մինչև նոյեմբերի 10-ը, չի ներկայացրել 1-ին չափաբաժնի մասով ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը և հիմք ընդունելով նշված հանգամանքը որոշել է մերժել վերջինիս հայտը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 14.12.2017թ. կայացած նիստի ժամանակ Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից լիազորված ներկայացուցիչը պնդեց գրավոր դիրքորոշմամբ ներկայացված հիմքերը հայտնելով հետևյալը.

«Պատվիրատուի կողմից խախտվել են ընթացակարգի կազմակերպման և անցկացման բոլոր ողջամիտ ժամկետները: Այն դեպքում, երբ ըստ հրավերին կից պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ով՝ գնման ժամանակացույցով, 1-ին չափաբաժնով մատակարարումները պետք է իրականացվեր 2017թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամսվա ընթացքում, Իշխան Միրզոյանից 1-ին չափաբաժնով ապրանքի

անվանումը և տեխնիկական բնութագիրը պահանջվել է ներկայացնել միայն մինչև 2017թ. նոյեմբերի 10-ը: Մատակարարման ժամկետների հետ կապված խնդրի վերաբերյալ Ֆ/Ա Իշխան Միրզոյանը տեղեկացրել է պատվիրատուին՝ հայտնելով, որ իր կողմից անհնար կլինի կնքել 1-ին չափաբաժնով պայմանագիր, այն դեպքում, երբ մատակարարման ամիսները արդեն անցել են, սակայն պատվիրատուի կողմից Ֆ/Ա Իշխան Միրզոյանի առարկությունը չի ընդունվել:»:

Ֆ/Ա Իշխան Միրզոյանի կողմից լիազորված ներկայացուցիչը հավելեց նաև, որ գտնում է, որ նման պայմաններում, երբ Ֆ/Ա Իշխան Միրզոյանից 1-ին չափաբաժնով պահանջվել է ներկայացնել փաստաթղթերը մինչև 2017թ. նոյեմբերի 10-ը, այն դեպքում, երբ մատակարարման ամիսները տվյալ չափաբաժնով արդեն անցել են, Ֆ/Ա Իշխան Միրզոյանը օբյեկտիվորեն զրկվել է տվյալ չափաբաժնով իր հետագա մասնակցությունը շարունակելու հնարավորությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներն են և դրանց ձեռքբերման և վճարման պայմանները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Հրավերի 9.7 կետի համաձայն՝ նույն հրավերի 1-ին մասի 9.5 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Խորհուրդն արձանագրում է, որ Հանձնաժողովի որոշմամբ փոփոխվել է Հրավերով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետները:

Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ կատարելով նշված փոփոխությունները, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի և Հրավերի 9.7 կետի պահանջները, քանի որ մինչև պայմանագրի կնքումը պայմանագրի

նախագծում կարող են կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի, այդ թվում՝ գնման ժամանակացույցի փոփոխմանը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 30.11.2017թ. Ֆ/Ա Իշխան Միրզոյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**